

տապանաքարին իր իսկ կողմէ եղած պատկերա-
գրութեան, (Ph. XX) բաւական պիտի ըլլայ
պարզելու որ ֆրանսացի հնագէտը, ինքիւն
կը հակասէ ու իսկական արձանագրութեան ոչ
համաձայն արտագրութիւն մը կու տայ ընթեր-
ցողին, գրելով «գլխիք»-ին:

Ի պատիւ ուրեմն մեր պաշտելի հնապետին,
պէտք է ըսել թէ, հակառակ մղոններով հեռու
գտնուելուն, յաշդած է ձեռք բերել իսկականը,
ճիշդ ընդօրինակութիւնը:

* *

Բայց ո՞վ է այդ «Ալի»-ը, որովհետեւ այլ ևս
անելորդ է կրկնել «գլխիքսին» սխալ ու անտա-
մարանական ընթերցումը:

Բարբէն Եպիսկոպոս «հնագոյն տապանագիր»
մը կ'ըսէ ու կը գոհանայ: Եւ սակայն, հետա-
խուզող աչքէն չի կրնար վրիպիլ սա պարագան
թէ այդ գերեզմանաքարը կը կրէ իր վրայ գի-
նահայն (écusson) մը, ինչ որ իրաւունք կու տայ.
մեզի մտածելու թէ այդ քարին տակ հանգչող
Հայ Տիկինը կամ Օրիորդը կը պատկանի ազ-
նուական ընտանիքի մը, ու թերեւ իշխանագուն
մըն էր:

Իր յանցանքներուն համար թողութիւն խըն-
դրող դժբաղդ Հայուհին հաւանօրէն իր գերեզ-
մանին մէջ ալ անդորրութիւն չէ ունեցած, ու
ո՞վ գիտէ ի՞նչ պատահարներ իր գերեզմանաքարը
բերեք հասուցեր են մինչև Հայոց եկեղեցին Տա-
ստնի:

Բայց ի՞նչ ալ ըլլայ, իրապէս զարմանալի է
որ 1316ին քանդակուած տապանաքար մը, իբր
օրինակ ծառայէ... 1596ին, 1601ին, (ՏԵՍ
«Սիոն» ի յիշատակած թիւս) 1707ին, (ՏԵՍ
ՏԶԹ. Թորգոմեանի ճշդումը «Բազմավէպ» ի
Մայիսի թիւին մէջ) ու թերեւ ծառայէ ասկէ
վերջն ալ:

Հաւանական է ուրեմն որ այդ քարին տակ
հանգչող անշուք մնայու սահմանուած մէկը
չէր, ու թերեւ օր մը կարենա՞ք լուսաբանու-
թիւն մը ձեռք անցնել այդ մասին:

Հաւելպ

Մ. Յ.

.. ~ ~ ~ ..

ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ

Մ. - ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Յուլիս 7 կիրակի առաւօտեան ժամը 10ին,
Մ. - Ռափայէլեան վարժարանի ոսկեղրուագ դահ-
լիճին մէջ տեղի ունեցաւ դպրոցական ամաժերձի
հանդէսը, որ երաժշտական հմայիչ նուագներով
կրկին յաջկանակներ կը ցուցադրէր. մին՝ 13
չրջանաւարտներու պսակադրութիւնը լիկէոնա-
կան վկայականով, միւսը՝ ուսման և բարի վարքի
մէջ յառաջադէմներու վարժատնութիւնը:

Երաժշտութիւնը՝ զուտ իտալական, յատկա-
պէս 1700ի ցայտուն հեղինակներէն առնուած
էր, քանի որ այս տարի, Խաալիոյ Վենապետին
և արքայազուն իշխաններուն նախաձեռնութեամբ
1700ի իտալական գեղարուեստի տօնը կը կա-
տարուէր Վենետիկ՝ իր ամէն ճիւղերուն մէջ:

Paiesielloի և Martiniի մեղմօրօր հեշտանք-
ներէն զատ Marcello և Cimarosa կը շողողա-
յին. միակ բացառութիւնը «Բամ փորոտան»ն
էր, բացառութիւն մը որ գեղարուեստի պահուն
ալ կը զգացնէր աշակերտութեան և ամբողջ հայ
զարութիւնի՝ թէ ազգային ալ էր այդ հանդէսը.
ազգային քայլերգի յոտնկայս ունկնդրութիւնը՝
սիրոյ և պաշտամունքի ցոյցն էր հեռաւոր ան-
մահ Հայրենիքին:

Բայց «Բամ փորոտան»-էն՝ աշակերտները
իրենց թանկագին մասնակցութիւնը բերին Mæ-
celloի «Տեառն է երկիր լրիւ իւրով» հրաշալի
սաղմոսին՝ որ քառորդ ժամու չափ տեսեց. եռա-
ձայն, սրբազան ու մոգիչ բան մ'ունէր իր մէջ
այդ խմբերգը, կարծես դաւանելով թէ իրաւ
Խաալիան ալ ուր հայ աշակերտութիւնը կը կըր-
թուէր՝ աստուածային երկիր մ'էր որ հաւաքա-
րապէս կը ներշնչէր ամէնուն սէր կրօնքի, կըր-
թութեան ու գիտութեան:

Բոլոր համերգներն ու խմբերգները՝ անձեռա-
նալի և միշտ սիրելի Ուսուցչապետ Ponzilaquaի
ղեկավարութեան տակ՝ ծափերով ու գոհունա-
կութեամբ պսակուեցան:

Միջոնկիալ պահերուն բեմ ելան չրջանաւարտ
սաներէն՝ Վ. Սրապեան, երախտագիտութեան
և զմայլանքի հայ չեչոով ոգեւորուած երկար-
օրէն ճառեց՝ Մխիթարեան Միաբանութեան,
Վարժարանին Տեսչութեան, դեռ հոն մնացած
ընկեր-աշակերտութեան, հուսկ Վենետիկոյ և
Խաալիոյ՝ իւրաքանչիւրին յատուկ զգացումի,
սիրոյ բաժին մը նուիրելով՝ տխրանոյշ հրա-
ժեշտի ողջոյնով:

Հոյն ոգեւորութեամբ բեմ ելաւ Յակոբ Տո-

պահանջան իտալերէն լեզուով փառաբանելով Հայ վարժարանն, հայութիւնն և իտալիան. Յակոբ Դաւիթեան ալ ֆրանսերէն շնչտով յետ սրբազան պարտականութեան մը զգացումներուն, յատուկ շնորհակալութիւն յայտնեց ֆրանսական պետութեան՝ որ վարժարանին հետ այնքան համակարգեց և անձեռն յարաբերութիւններ ունէր:

Երեք տաններ ալ բուռն ծափահարութիւններ խլեցին բազմութենէն, ինչպէս և Վարդգէս Եւրէջեան որ դաշնամուրը կը նուազէր ճարտարօրէն. Հուսկ Վարժարանին Ուսումնապետ Հ. Եղիա Փէշեկեան համառօտ բայց կուռ ոճով ականարկեց կրթական գործին և իր նպատակին, շնչելով մանաւանդ տոհմային դաստիարակութեան տեսակէտը. իր գոհունակութիւնն յայտնեց այն փայլուն յաղթանակներուն և եզական ու բարձր նախանձելի գիրքին համար որ շահած էր օտար միջավայրին մէջ միշտ առաջնութեան տիտղոսով, ըլլայ գիտական, ըլլայ մարզական ասպարէզներուն մէջ. յետոյ մի առ մի կարդաց անունները շրջանաւարտներուն՝ տալով անոնց լիկէնական վկայականները. հանդիսականները, հազուադէպ կերպով շրջանաւարտներու ընտանեկան պարագաներ, ծափերով ու խորին գոհունակութեամբ ողջունեցին և բարեմաղթեցին պսակաւորները:

Ընթացաւարտներն են.

- 1) Յակոբ Դաւիթեան — Ասորիքէն (Քեպիւօիէ)
- 2) Յարութիւն Աճէմեան — Կ. Պոլսեցի
- 3) Սարգիս Քէօրօղլուեան — Խոսորչուբցի
- 4) Ասատուր Յարութիւնեան — Դարապաս (Ջանգեզուր)
- 5) Արշաւիր Յարութիւնեան — Դարապաս (Ջանգեզուր)
- 6) Վարդգէս Երէջեան — Կ. Պոլսեցի
- 7) Աւետիք Կիւլէտէրեան — Այնթապցի
- 8) Ստեփան Սիւտպէտեան — Քանաքեռ
- 9) Յակոբ Սրապիտեան — Արտանուշ
- 10) Պօղոս Զիպուքեան — Կ. Պոլսեցի
- 11) Յակոբ Տոպաճեան — Ատաբազար
- 12) Արամ Պալեան — Ատաբազար
- 13) Կիւլէշ Սրապեան — Կէլվէ

Վարժարանի Տեսչութիւնը բարեկրթութեան ու ուսման սէրն անցնելու համար դնտալ աշակերտութեան՝ սահմանած էր յատուկ մրցանակներ, որոնց մաս մը ֆրանսական պետութեան նուէրներն էին Թրիեսթի հիւպատոսին ձեռքով դրուած:

Ի քաջերութիւն յաղթականներուն հոս կը դնենք իրենց անունները.

Բարի վարքի մրցանակի արժանացան Ֆ. Ա. պահանջ, Ստեփան Երուստեան, Գէորգ Սենթօվիշ, Տրդատ Մանուկեան: Իսկ ուսման՝ Բարսեղ Տիրեան, Պ. Կիրճեան, Է. Կիւզեան. — Ա. Սիւրմէլեան, Լեւոն Եփրեմեան, Գէորգ Սենթօվիշ. — Տիրան Սարաֆեան, Վ. Ստամպուլեան, Արմէն Զարեան. — Կարպիս Սաքելեան, Եղուարդ Ֆէսեան, Հ. Եօրկանճեան, Տիգրան Շահապեան:

Հուսկ բանքն ըսաւ Գրմ. Ըսքարբայ, մտերիմ ու սրտեռանդն խօսքերով. ան Վարժարանի Տեսչութեան կողմէ էր որ կը հրաւիրուէր հանդէսը փակելու, ուսուցիչ մարմնոյն ցայտուն դէմքը որ գիտցաւ այդ յուզիչ և փափուկ վայրկեանին այնքան նրբօրէն և անկեղծօրէն ի յայտ բերել սիրելիութիւնը հայ պատանութեան որ այնքան ազնիւ է բարքով, եռանդուն և յառաջադէմ ուսման մէջ և հուսկ այնքան փարած իր պաշտելի հայրենիքին՝ օրուն տենչանքով կը տոչորի այդ սեմերուն մէջ. տենչանք մը զոր կը հրահրեն այնքան իմաստութեամբ Միխիթարեան Հայրերը. և խօսքն աւարտեց Երկնքի օրհնութիւնն ու դերձելով Հայաստանի փրկութեան և երջանկութեան:

Բնմաստը որքան անպատրաստ, նոյնքան անակնկալի բերաւ յուզելով և խանդավառելով ամբողջ աշակերտութիւնը որ կը ճանչնար անոր մէջ գիտուն և հայասէր ուսուցիչը:

Ասիկա առաջին մասն էր հանդիսին:

Հրաւիրեալները գոհութեան և ուրախակցութեան խօսքեր ուղղելով Տեսչութեան և շրջանաւարտ տաներուն կը մեկնէին խոր տպաւորութեան տակ ազգի մը՝ որ այդքան զաղափար և տոկունութիւն ունէր:

Ժամ մը վերջ մտերիմ ու ցանկալի ակումբ մը տեղի կ'ունենար, այս անգամ լոկ դաստիարակներու և աշակերտութեան միջև վարժարանի ճաշարանին մէջ:

Հեռուէն ու մօտէն նամակ ու հեռագրներ կը հասնէին Միխիթարեան տուններն և ծանօթ անձնաւորութիւններէն օրուան շրջանաւարտներու խնդակցութեան մաղթանքով. անոնց ընթերցումը խանդավառ ծափերով կ'անեստուէր ու կը փակուէր: Ուսուցիչ մարմնէն ալ յատկապէս թանկագին մաղթանքներ ու ողջնրթի խօսքեր նուիրուեցան շրջանաւարտներուն՝ պատուի և պարտականութեան ճամբով հասնելու երջանիկ ապագայի մը:

Պիտի ուզէի հոս բառ առ բառ արձանագրել իմաստասիրութեան ուսուցչին մէկ խօսքը՝ զոր

բաժակաճառին մէջ բանաստեղծի և հոգեւորականի մտնելով արտասանեց. «Երբ այս վարժարանը մոտայ, ան ըսաւ, կարծես զգացի որ սրբազան շունչ մը կար միջավայրին մէջ, ներս կը մըտնէի ոչ այնպէս ինչպէս մեր զպրօններուն մէջ, այլ կարծես տաճար մը ուր համաժողով, համասիրտ կ'աղօթեն, կը սորվին, կը օրինեն, կը կրթուին, և այս տպագրութիւնը ինչ մեծ մը խիթարութիւն պատճառեց, և ուրախ եմ որ այս զգացումն հասարակաց առջեւ ալ յայտնելու բարեպաշտե՛հ առիթը կը ներկայանայ»:

Փիչ վերջ, մտերիմ ողջոյններու և բարեմաղթութեան հետ կը թողուին վարժարանի սեմերը ուսուցիչները՝ վերադառնալու տնէնով, քանի որ այնքան սրտակից վայր մը գտած էին և արգասաբեր. ու վաղորդայնին ալ մի առ մի շըրջանաւարտները՝ հետերինն տանելով մտքի և սրտի սրբազան պաշարը, յուսովը երջանիկ ապագայի մը իրենց համար, իրենց եղբայրներուն իրենց ամբողջ Հայրենիքին, ինչպէս որ Միփթ. Միաբանութեան տեսչականն է, եղած է ու պիտի ըլլայ, ինչպէս և է կրթական հաստատութեան:

ԽՍԲ.

ՈՒՍՑ. ԵՈՐԿԱ ԱՆԴԱՄ

Ս. ՂԱԶԱՐԻ ԶԵՄԱՐԱՆԻՆ

Ուսուցչապետ Եորկա ռուսէն համալսարանական աշակերտներու եւ վարժուիչներու խումբ մը առաջնորդած էր Վենետիկ՝ կրթական նպատակով: Քաղաք ժամանելուն առաջին այցելութիւնը՝ իր խումբին հետ, տուաւ Ս. Ղազարի վանքին, որու հետ Ուսուցչապետը տարիներէ ի վեր իմացական կապերով զօդուած է ու նուիրած է անոր՝ ինչպէս նաեւ բովանդակ հայութեան, իր սիրտն եւ միտքը, չանտեսելով իր ուսումնական աշխատութեանց մէջ հայ պատմութիւնն եւ գրականութիւնը ու ամէն առթիւ ջանալով քննել ու վեր հանել հայ կեանքը:

Ուսուցչապետին հայանպաստ գործունէութեան եւ հայ գրականութեան եւ պատմութեան նկատմամբ մատուցած ծառա-

յութեան համար Միաբանութիւնն գաղափարն յղացած էր զինք անդամակից ընել Ս. Ղազարի Հայկական Ճեմարանին: Եւ անոր Վենետիկի տուած այցելութիւնը յարմար պարագայ նկատելով, ուզեց այդ առթիւնութիւնը Ճեմարանին անդամակցութեան վկայանդուրդը հայասէր Ուսուցչապետին:

Օգոստոսի 22ին երկույթ մը կազմակերպուեցաւ Մուրատ-Ռափայէլեան վարժարանի շքեղ դահլիճին մէջ ուր հաւաքուեցան իտալացի ընտրեալ հոծ բազմութիւն մը եւ քաղքիս հայ գաղութը: Ռուսէն հիւրերը իրենց ազգային ժողովրդական երգերէն նմոյշներ երգեցին, որոնց նկատմամբ Ուսց. Եորկա ծանօթութիւններ տուաւ եւ զին խմստն եւ հոգին աւելի լաւ ըմբռնել տալու համար. երգեր աւելի մեղամարդոտ քան ուժեղ, տարտամ եւ երազկոտ թեւաւ ծուկեամբ: Զուարթ մեներգներ նուագեցին ծանօթ գէշոր Ս. Վուլքեսգու, տիկ. Պրաւդուկեսգու եւ Օր. Գ. Ունկուրեմ, վերջինս այնքան շնորհով եւ քաղցրութեամբ լի:

Ապա Միաբանութեան ատենադպիր Վ. Հ. Յոհան Վ. Ազգեր խօսեցաւ համառօտիւ ծանօթացնելով Ուսց. Եորկայի հայապիտան զգացումները, զոր յետոյ իր ուսուցչական ասպարէզին մէջ մտաւորապէս ալ յայտնեց, իր գրական աշխատութեանց մէջ հետաքրքրուելով եւ քննելով հայկական հարցն, կեանքն եւ պատմութիւնը, հանդիսանալով հայասէր եւ հայագէտ: Հետեւաբար Միաբանութեան Միաբանութիւնը ի նշան իր համակրանքին եւ յարգանքին առ Ուս. Եորկա, զինք անդամակից կ'ընէ Ս. Ղազարի Հայկական Ճեմարանին. այս խօսքերով յանձնեց Ուսուցչապետին անդամակցութեան վկայանդուրդը մեծաշունք ծափերու մէջ: Ուսց. Եորկա յայտնեց իր շնորհակալիքը իրեն եղած այս պատուոյն համար եւ խօսքը վերջացուց ըսելով թէ անկարելի է զբաղի հայ կեանքով, գրել հայ պատմութիւն՝ առանց արտասուելու:

ԽՍԲ.